

377
6-25

w 528

~~1742~~

370

2300-SG

Handwritten notes and stamps at the top right, including the number 0120-10 and 5073.

377
5-25
կ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Գ. ՋԵՄԱՐԱՆԻ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

ԶԸՆԹԱՑԻՑ 1881 2 ՈՒՍԲ. ԱՄԻ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ 1742

Տ. Տ. ԳԷՈՐԳ-ԱՅ Դ.

1004
15435



ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ

Հպատակելով Ս. կամաց Վեհ. Հայրապետի՞ յանցելուն
1881—2 ուս. ամի ընկալայ գտեսչութիւն Գէորգեան ձե-
մարանիս Սայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, որ ի ճահն էր ապա-
քէն այլում ումեք հմտագունի քան զիս, եւ փորձառուի-
այլ որ յիս՝ վստահութիւն Վեհ. Հիմնադրի՞, եւ քաջալե-
րութիւնն խրախուսեցին զիս ստանձնել զպաշտօնս ծանր-
եւ աշխատեալ ըստ չափու կարողութեան իմոյ՝ յուսամ
թէ ոչ ապարդիւն անցանիցէ ժամանակն՝ ցորչափ ինձ եւ
անզօր ուժոյ իմում՝ յանձն իցէ կառավարութիւն նուիրա-
կան Տաճարիս:

Այս յոյս բորբոք է յիս եւ այժմ՝ իսկ, տեսեալ զի ի ձե-
մարանի աստ խուճք ինչ կարող ուսուցչաց՝ յորոց ոմանք
յառաջ քան զիս էին, եւ ոմանք ի հրաւեր իմ՝ եկին հա-

Handwritten purple notes on the left side of the page.

սին՝ գործէ ի ձեմարանիս ի փոյթ կատարեալ եւ յեռանդն ճշմարիտ. յորոց իւրաքանչիւր ըստ չափու կարողութեան իւրեանց թեթեւացուցանեն ինձ զծանրութիւն պաշտամանս իմոյ՝ զոր տեսեալ քաջալերիմ:

Ահա բոլորեցաւ շրջան մի ուս. տարւոյ. եւ համաձայն 20րդ յօդուածոյ կանոնադրութեան ձեմարանիս, պատիւ ունիմ ամենախոնարհաբար առաջի առնել Վեհ. Տէրութեան Ձերում զտեղեկագիրս զարգի վիճակէ ձեմարանիս: Այլ չեւ եւս եկեալ ի համար տեղեկագրիս՝ զայս ինչ յաւելում ասել՝ զի յամենայն ի վարչական գործս ձեմարանիս՝ զիմեցի ի խորհուրդ Մանկ. Ժողովոյն, եւ զոչինչ որոշումն գլխաւոր որոշեալ է իմ առանց խորհրդոյ Մանկ. Ժողովոյն, քաջ ի միտ առեալ թէ ի ղեկավարութեան մեծի ինչ հաստատութեան, որպիսի ինչ ձեմարանս է, անհրաժեշտ է պահպանել միութիւն յամենայն կարգս. եւ թէ՛ այս միութիւն կարգի եւ կանոնաց պահպանի արդեամբ, եթէ ամենեքեան՝ որ գործենն՝ մասնակցիցին վարչութեանն, թողեալ տեսչին զգործարուութիւնն: Ի մի բան՝ զհետ եղէ պահպանել զհամերաշխութիւն խմբին ուսուցչաց:

Արդ եկից ի հաշիւ տեղեկագրին:

Տեղեկութիւն 1881 — 2 ա. թ.

Յընթացս 1881—2 ուս. ամին եղեւ գումարել Մանկ. Ժողովոյն երեսուն անգամ՝ ըստ այլ եւ այլ խնդրոց ձեմարանիս, յորոց կարեւորագոյնքն եւ արժանիք ուշադրութեան են այսոքիկ:

Ի սկզբան անցելոյ ուս. ամին օրհնութեամբ Վեհ. Հօրք բացաւ Բ. Ասարան. եւ ի պատճառս նորոգ կազմակերպութեան խմբին ուսուցչաց փոխեցաւ ծրագիր Ա. Ասարանին, եւ երկուսուն մասնագիտական Ասարանացս տուաւ

ուղղութիւն ինչ մանկավարժական: Որոշելով ընդ նմին զի եւ յառաջակայն Գ. Ասարան ըստ նմին ուղղութեան ընթացի, որպէս եւ եղեւ իսկ յայսմ ամի: Ընդ այս կազմակերպութիւն յուսայ Մանկ. խորհուրդ ձեմարանիս պատրաստել ուսուցիչս մանկավարժս ի պէտս ազգային ուսումնարանաց, մեծ ինչ ծառայութիւն մատուցանել կրթութեան ազգիս յընդհանուրս:

Ի սկզբանէ անցելոյ ուս. ամին ուսանողք Ա. եւ Բ. Ասարանաց սկսան լսել զմանկավարժութիւն եւ զփիլիսոփայական օժանդակ մակացութիւնս, եւ մնայր մարդել նոցա եւ ի հմտութիւնս վարժապետական արուեստին: Այս գործ դժուարին ըստ ինքեան եւ ծանր սկսաւ ի պայմանս եւս դժուարինս. նախ՝ զի նորավարժ ուսանողք անպատրաստք էին եւ ոչինչ օրինակ տեսեալ էր նոցա ի մարդիլ ի տեսական կրթութիւնս, եւ պարտաւորեալ էին ըստ կանոնի առնել եւ ինչ ինչ փորձս դասատուութեան. եւ երկրորդ զի չեւ եւս էր ձեմարանիս վարժոց իւր սեպհական հանդերձ կարեւոր պարագայիւք՝ որչափ հարկն էր ի յաջող ելս գործոյն, վասն որոյ եւ ուսանողք ձեմարանիս առ ժամանակ ինչ հարկեցան առ ի փորձ փորձնական դասախօսութեանց յաճախել յերկուսն ուսումնարանն Վաղարշապատայ. ուր եւ Հոգաբարձութիւնն՝ ըստ ներելոյ հանգամանացն, ընձեռեաց նոցա զկարեւոր դիւրութիւնն ի մարդումն նոցա: Ի հարկէ եւ մեղ մնայր ի շնորհակալիս Հոգաբարձութեանն եւս ապացուցանել, թէ մի յապարդիւն անցանիցեն փորձք մեր, եւ այս՝ ոչ միայն ըստ օգտի ուսանողացն մերոց, այլ նաեւ ի մասնաւորի յօգուտ մանկանց նոցա, որոց էր ուսանել ուսումն եւ կրթութիւն յուսանողացն մերոց իբրեւ ի վարժապետաց: Առ ի հասանել ի կրկին նպատակս յայսոսիկ, եւ առ ի թեթեւացուցանել զդժուարութիւնս յա-

ուսջացեալս յերեսաց անյաջող պայմանացն վերոյիշելոց, Վարչութիւն ձեմարանիս զհետ եղեւ հնարաւոր միջոցաց. եւ զհնարաւորսն տնօրինեաց այսպէս:

Որոշեցաւ փոխանակ երկից բաժանմանց վարժոցին իբրեւ ի տիպ ծխական դպրոցի ունել՝ միայն զմին ի վարժութիւն ուսանողաց մերոց ի դասախօսել անդ, քանի անհրաժեշտ էր հսկողութիւն Մանկավարժին ի վերայ նոցա, եւ քանի ոչ էր մեր տալ նմա օգնական զօք՝ յոր հաւատայր մանկավարժն զհսկողութիւն իւր՝ ի լինելն իւրում՝ յայլում բաժնի՝ ի հսկել ըստ անհրաժեշտ պահանջիցն:

Բաժանմունք Վարժոցիս յանձն եղեւ Պ. Սեդրակայ Մանգինեան, որ ոչ միայն հանապազօր՝ այլ եւ ի հարկին յամենայն ժամու անձամբ ներկայ գտանէր դասատուութեան նորավարժիցն ուսանողաց, երբեմն յուշ առնելով նոցա զկարգ վարժութեան, եւ երբեմն ինքնին իսկ աւարտէր զդասախօսութիւնն յօրինակ եւ ի կրթութիւն վարժելոցն: Եւ զի այսպէս միշտ ներկայութիւն Մանկավարժին ոչ հայէր արգեօք ի նպատակ անդր մեր, յայտ է ի կատարեալն կրթութիւն ուսանողացն մերոց, եւ զի մի նօքա՝ նօրավարժքն յանգէտս անիոյթ մնայցեն պարտուց իւրեանց եւ հեղգայցեն, յուսացեալ, թէ Մանկավարժն աւրնիթեր կայ՝ եւ ընու զթերին իւրեանց, այլ զի եւ ինքեանք իսկ նօրավարժքն ազատ մտցեն յասպարէզ անդր դասախօսութեան եւ անցցեն ի գլուխ գործոյն, Պ. Մ. նուագեցուցանէր տակաւ ի ժամ՝ փորձոյն զազգարարութիւնս իւր եւ զմիջամտութիւն: Նաեւ բացակայ իսկ երբեմն գտանէր, սակայն ըստ մանկավարժական կարգաց պահանջէր ի նոցանէ զհամար գործառնութեանց նոցա, եւ այսպէս կրթէր զնոսա եւ ի նոյն իսկ ի հսկել անձանց իւրեանց եւ գործոց: Յայս նպատակ հայէին արգարեւ եւ այն ամենայն գրաւոր

եւ բերանացի հաշիւք երրակի ժողովոցն ըստ եօթնեկաց՝ յորս պարտ էր ներկայ գտանել նօրավարժիցն ամենեցուն, որոց եւ նախագահէր Պ. Մանգինեան: Գործ երրակի ժողովոցս շաբաթական կազմէին ամբողջութիւն ինչ անբաժան, ի միումն միայն՝ ի շաբաթ աւուրս՝ պահէր կարգ արձանագրութեան: Այս երրորդ ժողով բաց էր եւ առաջի այցելուաց՝ որք ցանկայինն: Ես իսկ անձամբ յաճախէի յայտոսիկ ժողովս, զի մարթացայց հետեւել ուղղութեան գործոյն: Երբեմն ներկայ լինէին անդ եւ ոմանք յուսուցչաց:

Ժողովն որ ի շաբաթ աւուրս՝ անուանէր խորհուրդ, եւ նուիրեալ էր համարատուութեան՝ եթէ զի՞նչ գործեալ էր նօրավարժիցն յընթացս եօթնեկին անյետոյ, եւ խորհրդակցութեան թէ յի՞նչ արգեօք ունին ձեռնարկել յառաջիկայն, յորս էր՝ զի հաստատէր Պ. Մանգինեան զխորհուրդ ուսանողացն՝ եւ էր՝ զի հաղորդէր նոցա ինչ ինչ կարեւոր բացատրութիւնս, եւ հրահանգէր զնոսա ի զգուշութիւն յառաջիկային, յիշելով նոցա միշտ եւ զնախորդ հրահանգաց: Խօսէին ի ժողովի անդ զնիւթոց դասուցն՝ զորս ունէին աւանդել, եւ զվարուց աշակերտացն եւ առհասարակ զհանգամանաց դասուցն, թէ յորում էր յաջողութիւնն եւ յորում անյաջողութիւնն: Քննէին զգրաւոր հաշիւս դասատուաց եւ զնկատողութիւնս ընկերակցաց նոցա. եւ ինքն իսկ Պ. Մանգինեան հաղորդէր նոցա զայն ամենայն՝ որ միանգամ գրաւեալ ունէին զուշագրութիւն նօրա յընթացս այնր եօթնեկի ըստ ամենայն հանգամանաց: Նոյնպէս եւ ի քննին առնուին եւ զյաջող կամ անյաջող ելս փորձառական դասուցն հանդերձ կարեւոր բացատրութեամբք քննչացն՝ որ ի նոցունց իսկ ուսանողացն եւ յայլոց ընկերակցաց նոցա. զժողովսն կնքէր ինքն Պ. Մանգինեան: Արգարեւ ի

օկղբան անդ նորավարժք ցուցանէին անփորձութիւնս ինչ
 ի համարատուութեան՝ որ կատարէրն հրապարակաւ եւ
 ամենայն անկեղծութեամբ. այլ ուրախութեամբ տեսանել
 էր մեզ, զի հետզհետէ ըմբռնէին զմիտս եւ զխորհուրդ
 համարատուութեանցն, սովորէին համբերութեամբ լսել
 գատողութեանցն այլոց՝ զգործոց իւրեանց, եւ ըստ քաղա-
 քավարութեան պատասխանել ընդդիմախօսացն եւ խօս-
 տովան լինել զսխալանս իւրեանց: Հասու լինէին, եթէ զի՞նչ
 իցէ միաբանութեամբն գործել եւ խորհրդով, եւ թէ զի
 արդ զգործ քան զանձնաւորութիւն նախադասել արժան
 է. եւ թէ զի՞նչ իցէ միահամուռն պատասխանատու ար-
 դեանց իրացն լինել, եւ կամ անզգուշութեամբ խանգարել
 զգործ ինչ հանրական. ի մի բան, հասու լինէին ծանրու-
 թեան պատասխանատուութեան իւրեանց: Նորավարժքն
 իբրեւ ի հայելոջ տեսանէին ի ժողովս անդ, զճըշգրիտ
 պատկեր գործոց իւրեանց, թէ արդեօք դասախօսութիւն-
 քըն զոր դասախօսեն՝ արտաքին ցոյցք ինչ իցեն, կամ լոկ
 ժամավաճառութիւն, եւ թէ իցե՞ն արդեօք բաւական ի
 սաստել աշակերտացն առանց խստանալոյ, եւ թէ վարժե՞ն
 արդեօք զնոսա ի բարոյական կարգս եւ ի կանոնս առանց
 աւելորդ բժախնդրութեան, եւ թէ պահե՞ն արդեօք անեղծ
 զեռանգն մանկան՝ ոչ իւրք արտաքս քան ըստ սահման
 ճշմարիտ եւ վայելուչ կրթութեան վազեալ, եւ թէ յաջո-
 զիցի՞ն արդեօք հեշտ եւ զիւրին յաս եւ ի միտս մանկանցն
 ընծայել զուսումն՝ անկորուստ պահելով եւ զըջութիւն. եւ
 թէ հաստատիցե՞ն զուսումն ի հիմունս բնականս, եթէ հե-
 ուի անդր մղիցեն զմանուկն ի կենաց եւ յազգայնութենէ.
 եւ հոսկ ուրեմն հասու լինէին, թէ որչափ ինչ զժուլարու-
 թիւնք եւս մնան՝ կրթելոյ զանձինս յայսմ՝ ամենայնի ի
 կարեւոր նկատմունս ուսուցչութեան:

Որպէս ի վեր՝ անդր ասացաւ, եթէ եւ այն երկոքին ժո-
 ղովք սերտիւ իմն լծորդեալ էին խորհրդոց նոցա: Յընթացս
 միոյ եօթնեկի մին ի սովորական դասուց վարժոցիս լինէր
 « դաս փորձոյ » ի հինգ շաբաթի աւուրս, յորում՝ ամենայն
 նորավարժք պարտաւորապէս ներկայ լինէին փորձոյ դա-
 սախօսութեան միոյ յընկերացն իւրեանց. որպէս զի իւրա-
 քանչիւր առանձինն զգիտողութիւն իւրեանց եւ զտպաւո-
 րութիւն յանդիման կացուցեն ի խորհրդին ի քննել զնոսա:
 Առ այս եւ երկու երկու ի նոցանէ նշանակէին ըստ իւրա-
 քանչիւր եօթնեկի իբրեւ ի պաշտօնէ՝ դիտել զդասախօսու-
 թիւնն, եւ առաջի առնել խորհրդոյն մին՝ բանիւ բերանոյ,
 եւ միւսն՝ գրելով զմանր մանր հանգամանս դասախօսին՝
 թէ՛ ըստ արտաքին եւ թէ՛ ըստ ներքին հանգամանաց:
 Նպատակ ժողովոյս էր, զի ի մէն մի եօթնեակս գէթ մի
 անգամ ամենեքին ուսանողքն ի միասին տեսցեն եւ լուիցեն
 զդասախօսութիւն ի վարժոցին, քանի ոչ էր նոցա յամե-
 նայն աւուրս հասանել եւ ներկայ լինել ամենայն դասախօ-
 սութեանցն վարժոցին, ունելով իւրեանց առանձինն պատ-
 րաստութիւն դասուց ի ձեմարանի. իսկ որոց միանգամ
 պատահէրն եւ զգամն պատրաստել եւ ի վարժոցն ի ժա-
 մու հասանել, այն ի կամն նոցա թողեալ էր: Այ առանց
 պատրաստութեան էր եւ փորձառականն դաս, այլ պար-
 տիք ի վերայ կային նորավարժին կանխաւ առաջի առնել
 Պ. Մանկավարժին զգրաւոր ծրագիր դասուն ըստ ման-
 րաման հանգամանացն, զոր ի չորեքշաբաթի աւուրս քըն-
 նէր առաջի ամենեցուն ի նախապատրաստական ժողովին
 եւ կանխաւ զգուշացուցանէր զդասախօսն չտալ տեղի թե
 րութեանց, եւ կամ հաւանեալ գրաւոր բացատրութեան
 նորա, քաջալերէր զնա ըստ այնմ եւ գործել. տայր եւ
 հրահանգս ինչ կարեւորս ըստ հարկի: Ի խորհուրդս շա-

բաթ աւուրցի, եթէ քննիչքն եւ եթէ Պ. Նախագահն քրն-
նէին, թէ սրչափ ճիշդ վարեցաւ դասատունն ըստ հրահան-
գացն տուելոց, եւ թէ՛ զիսորդ խոտորեցաւ ի հրահան-
գացն, եւ թէ՛ զինչ պատճառքն էին:

Այսչափ ինչ զներքին վարչութենէ վարժոցին՝ եկկց արդ
տալ տեղեկութիւնս ինչ եւ զմիամեայ ընթացից վարժո-
ցին. — Երկու երկու դաս առ օր յանձնեցաւ ուսանողաց Բ.
Լսարանին. իսկ ուսանողք Ա. Լսարանին ի Յունկար ամսոյ
եւ այսր սկսան մասնակցել փորձառական դասուցն միայն:
Եւ զի զաշակերտս վարժոցին զժուարին իմն եղեւ գո-
մարել ի սկզբան, հարկ եղեւ կանխաւ տալ ուսանողացն
հրահանգս առ այն, եւ սկիզբն եղեւ ուսման ի վարժոցին
ի 29 Սեպտեմբերի: Ի սկզբան՝ թիւ աշակերտացն եւ աշա-
կերտուհեաց յաճախ փոփոխէր ի պատճառս յապագելոյ
ոմանց մտանել յուսումնարան, եւ ի պատճառս դասա-
ւորութեան նոցա, յորոց բազումք էին՝ օր մտին յառաջին
դասարան, յորժամ ուսուցիչքն կարգեցան ի Չանս հո-
գաբարձուաց, եւ մնացին մեզ տղայք 29, յորոց եօթնեւ-
տասն՝ օրիորդք էին: Թէպէտ եւ ոմանց ի սոցանէ ուսեալ
էր կանխաւ եւ ճանաչէին զգիրս, սակայն այնչափ ան-
վարժք էին, մինչ զի հարկ եղեւ դասաւորել զնոսա ի մի եւ
նոյն բաժնի՝ ուսանել եւ նոցա զմասն Ա. տարւոյ: Իբրեւ
կենդրոնացուցիչ առարկայ ուսման ընտրեցաւ «Ազգ. ըն-
տանեկան աշխարհ» Պ. Սեղրակայ Մանգլինեան, յորոյ ի
հիմունս յեցեալ՝ աւանդեցին մանկանց եւ ըստ այլ եւ այլ
պատահական հանգամանաց ինչ ինչ տեղեկութիւնս զԱս-
տուծոյ, զմարդոյ եւ զբնութենէ. եւ զի փոքր էր առ օրին
ժամ դասուցն, վասնորոյ եւ մեծ մասն պարապմանց տուաւ
ի գրել եւ յընթեռնուլ ըստ նորագոյն եղանակի, այն է՝
ոչ ուրոյն հնչելով զբաղաձայնս, եւ ոչ առանձին այբբե-

նարան ի գործ ածեալ: Ի վախճան տարւոյն ըստ արգեանցն
երեւեցաւ, զի երեք աշակերտք եւ երեք աշակերտուհիք
միայն մնացին ի նմին դասարանի, իսկ այլքն առհասարակ
գովութեան արժանիք, եւ փոխեցին զդասարանս իւ-
րեանց:

Ի վարժոցին անընդհատ յառաջ գնայր դասատու-
թիւնն ըստ կանոնի, եւ ընդհատէր ի տօնի աւուրս, յորս
եւ ձեմարանս տօնէր: Այլ ի վերջին աւուրս տարւոյն թու-
լացաւ՝ այն ինչ մերձեցան հասին աւուրք քննութեան նոյն
իսկ ուսուցչացն ուսանողաց ի ձեմարանի. որոց ի հարկէ
էր ամփոփել զուշ եւ զուրուշ ի պատրաստութիւն դասուց
իւրեանց եւ ի քննութիւն: Աստանօր զառաջինն զգալի
եղեւ եթէ՛ անհրաժեշտ է մեզ ունել եւ զայլ ոք օգնական
ուսուցչի, որ եւ ի հարկին պատրաստ գտանիցի շարու-
նակել զգործ նորավարժիցն ուսուցչաց, մինչ նոքա գայցեն
ի պատրաստութիւն դասուց իւրեանց ի ձեմարանի: Այս
պակասութիւն օգնականի մինչեւ յայն զգալի եղեւ, զի
հասին աւուրք քննութեան աշակերտաց վարժոցին, եւ չէր
հնար եւ ոչ ումեք ի նորավարժ ուսուցչացն ներկայ լինել
անդ ի քննելն զաշակերտս իւրեանց. եւ առանձինն քննե-
ցին զնոսա ուսուցիչք վարժարանին Վաղարշապատայ:

Նաեւ պէսպէս զժուարութեանց տարան նորավարժքն
մեր ուսուցիչք, մինչեւ յաջողեցան զաշակերտս վարժոցին
ընդելացուցանել կարգացն եւ կանոնաց, զորս ընկալեալ
էր մեր: Եւ այս ամենայն ըստ մասին յառաջ գային յան-
փորձութենէ նորավարժիցն, եւ ըստ մասին՝ զի վարժոցն
ընդ կրկին վարչութեամբ էր. այսինքն զերկուս ժամս
աւուրն ընդ հսկողութեամբ վարչութեան ձեմարանի, եւ
զմնացեալ ժամս աւուրն ընդ հսկողութեամբ վարչութեան
ուսումնարանին Վաղարշապատայ. նաեւս կրկին վարչու-

Թիւնքս անկախ ի միմեանց վարէին, եւ որ ինչ պարտաւորիչ էր միումն, ոչ այնպէս էր եւ միւսումն. եւ այսպէս յառաջ գային այն ամենայն անյարմարութիւնք, յորս ստիպէին աշակերտքն պահ ըստ պահէ փոխել զպահպանութիւն կարգին, եւ այլպէս զգուշանալ:

Եւ որպէս զի սովորեսցին աշակերտքն ի մաքրութիւն, եւ մի ընդ առաւօտս յամեացեն գալ ի դասարան, եւ զի առհասարակ կատարեսցեն զպատուիրեալսն եւ ի տունս իւրեանց, հարկ համարեցաւ, զի նորավարժքն ուսուցիչք ինքնին խօսեսցին ծնողաց աշակերտացն եւ ոչ ի ձեռն միջնորդի ուրուք, այն է ի ձեռն ուսուցչին Վաղարշապատայ. զի այնպէս անկատար մնային պատուէրքն տուեալք աշակերտացն եւ հարկ էր կրկնել եւ երեքկրնել մինչեւ լսելի առնել եւ ծնողաց աշակերտացն: Բազում անգամ խանգարէին ընթացք դասուցն առ պակասութեան դասարանական պիտոյից, գործօրինակ գրոց, գրատախտակաց, քարեայ գրչաց, քանոնաց եւ այլոց այսպիսեաց. այնպէս զի հարկեցան ուսուցիչքն նորավարժք կազմել գանձարան ինչ փոքր յիւրեանս, եւ շուկ զպիտոյսն պակասեալս: Առ ի զառաջս առնուլ այսպիսեաց անպատեհութեանց յապագայի վարչութիւն ձեմարանիս արժան դատեցաւ պահանջել ի ծնողաց աշակերտացն առ իւրաքանչիւր՝ գումար ինչ որոշեալ ի սկզբան տարւոյն, եւ անթերի հոգալ զպիտոյս վարժոցին եւ միանգամայն ազատ մընալ ի տարապարտ ազդարարութենէն, զոր յանցելումն բազում անգամ կրկնեցին ի լուր ծնողաց աշակերտացն եւ ուսուցիչքն եւ այլք ոմանք, եւ զարձեալ անլուր մնացին եւ ապարդիւն: Նաեւ պակասութիւն մեծ էր արգարեւ եւ անյարմարութիւն կազմութեան վարժոցին, եւ նատարանաց նորա, որ եւ պատճառս անհանգստութեան տային մատաղահաս աշակեր-

տայն, եւ բնականապէս նպաստէին նոցա յայլ ինչ դարձուցանել զուշադրութիւն իւրեանց ի Ժամն դասուցն:

Յետ միամեայ փորձառութեան որոշեաց Մանկ. խորհուրդս, զի ձեմարանս առանձինն ունիցի իւր զերիս բաժանմունս վարժոցին. առ որ որոշեաց խնդրել կանխաւ զհաճութիւն Վեհ. Հայրապետիդ, եւ ըստ այնմ միացուցանել զԺառանգաւորաց Դպրոցն ընդ ձեմարանիս. այնպէս՝ զի որ գիշերօթիկքն էին ի նմին դպրոցի, առանձին զգուշաւոր քննութեամբ զետեղեսցին ի դասարանս դասարանս ձեմարանին ըստ համեմատութեան նոցա, եւ որ փոքունքն են՝ մնասցեն ի նմին դպրոցի, իբր ի վարժոցի, եւ յաւելցուք ի նոսա եւ զայլս եւս երթեւեկ աշակերտս: Այլ եւ ի նկատի առեալ զի պակասին սենեակք ի ձեմարանիս, եւ մանաւանդ զի ցանկալի էր մեզ հոգ ունել զծախուց նորա ի մասին տնտեսութեան, որոշեաց Մանկ. խորհուրդն, զի կցեսցուք ընդ վարժոցին եւ զառաջին դասարան ձեմարանիս, յանձնելով զկառավարութիւն նոցա, զվարժոցին եւ զԱ. դասարանին Պ. Սեգրակայ Մանդինեան, տալով նմա առ այժմ՝ զոր յօժանդակ ուսուցիչ, ունել զտեղի նորա ի վարժոցին կամ յԱ. դասարանի, ի լինելն նորա ի միումն կամ ի միւսում:

Եւ զի աշակերտք Ժառանգաւորաց Դպրոցին հանապազօր յառաւօտու եւ յերեկոյի յաճախէին ի Ս. Եկեղեցի ի Ժամասացութիւն, զայս եւս ի նկատի առեալ Մանկ. խորհուրդն, որոշեաց տալ կատարել աշակերտաց ձեմարանիս զայն պարտաւորութիւն, առաքելով զնոսա օր ըստ օրէ ըստ առանձին կարգի, ի Ս. Եկեղեցի ի զպրութիւն եւ ի սպասաւորութիւն: Ընդ որոշումս լիայոյս է Մանկ. խորհուրդս, եթէ յաջողիցի ձեմարանս պաշտօնեայս արժանաւորս պատրաստել Ս. Եկեղեցւոյ, որ եւ համաձայն գոլով

ըղձից եւ նպատակի Վեհափառ Հայրապետից, ըստ բարեհաճ կամաց Ձերոց հաստատեցէք զայն եւ թոյլ ետուք ըստ այնմ առնել յառաջիկայ եւ յամենայն տարուջ, եւ որ կատարեցաւ իսկ: Նա՛ փափագելի էր Վարչութեան ձեմարանիս՝ որպէս եւ ակն ունիմք յապագայի, զի եւ երկրորդ եւ երրորդ դասարանքն փոխադրիցին ի վարժոց անգր իբրեւ ի լրումն ամբողջութեան դպրոցական մասին. եւ ի ձեմարանի աստ մնայցեն միայն դպրանոցական երեք դասարանքն եւ ձեմարանական երեք լսարանքն, որով եւ տնտեսութիւն ի ծախսն եւ կանոնաւորութիւն ի ներքին ընթացս ձեմարանին լինէր արդեօք:

Այսչափ ինչ զվարժոցէն եւ զվիճակէ վարժապետացուացն. այժմ անցցուք ի հաշիւս ձեմարանին, տալ տեղեկութիւնս եւ զներքին վիճակէ նորա:

Մանկ. խորհ. ի սկզբան անդ ուսումնական ամին անցելոյ՝ յետ որոշելոյ առ ժամն զառարկայս աւանդելիս եւ զթիւս դասուց՝ թէ ի կրկին լսարանս եւ թէ ի վեց դասարանս դպրանոցին, ի շարունակելն զգասս, սկսաւ կազմել եւ ծրագիր ինչ ընդհանուր, որով միայն մարթ էր տալ կանոնաւոր ընթացս ուսման եւ դասատուութեան: Ապաքէն ոչ նոր իմն է ինդիր ընդհանուր ծրագրին յուսումնարանս Հայոց. եւ ամենայն հոգաբարձուք ազգային ուսումնարանաց եւ Մանկ. խորհուրդք ի տեղիս տեղիս զբազեցան եւ զբազին զխնդրովս, սակայն դարձեալ կանոնաւոր եւ մշակեալ ծրագիր չէ այսօր եւ ոչ միոյ ուսումնարանի, նոյնպէս եւ ոչ ձեմարանիս. վասն որոյ եւ յանցելումն ամի ամենայն լրջմտութեամբ ձեռն ի գործ արկ Մանկ. խորհուրդս կազմել զկարեւորն ծրագիր, եւ ակն ունիմք յայսմ ամի ի լրումն ածել զայն ըստ կարի, եւ մատուցանել Վեհափառ Տէրութեան Ձերում ի հաստատութիւն: Իսկ զոր առ ժամն

որոշեաց Մանկ. խորհուրդն՝ այսօրիկ էին առարկայք աւանդեալք ի ձեմարանիս եւ թիւք դասուցն՝ յանցելումն ամի:

յ Ա. Լսարանի.

Ասարկայք

Հաբախական դասք.

Աստուածաբանութիւն.	2
Պատմութիւն ընդհանուր եկեղեցւոյ.	2
Նոր Մատենագրութիւն Հայոց.	4
Քննական Քերականութիւն.	1
Ընդհանուր Գրականութիւն.	2
Ռուսաց Գրականութիւն.	2
Տրամաբանութիւն.	3
Հոգեբանութիւն.	3
Գերմաներէն.	3
Գաղղիերէն.	2
Ֆիզիքական աշխարհագրութիւն.	2

26

յ Բ. Լսարանի

Աստուածաբանութիւն.	2
Պատմութիւն ընդհանուր եկեղեցւոյ.	2
Ընդհանուր Գրականութիւն.	2
Ռուսաց Գրականութիւն.	2
Մանկավարժութիւն.	3
Հոգեբանութիւն.	9
Բարոյական փիլիսոփայութիւն.	3
Գերմաներէն.	3
Տարրալուծութիւն.	1

24

Առարկայք	ՅԱ. Դասարանի	Հաճախական դասք
Կրօն (Սրբազան Պատմութիւն)	.	3
Հայոց լեզու.	.	5
Ռուսաց լեզու.	.	5
Թուրքաբանութիւն.	.	4
Բնական պատմութիւն.	.	2
Աշխարհագրութիւն.	.	2
Ձայնագրութիւն.	.	4
Նկարչութիւն.	.	2
Գեղագրութիւն.	.	3
		<hr/> 30

	ՅԲ. Դասարանի	
Կրօն (Սրբազան Պատմութիւն)	.	3
Հայոց լեզու.	.	5
Ռուսաց լեզու.	.	4
Թուրքաբանութիւն.	.	4
Բնական Պատմութիւն	.	3
Աշխարհագրութիւն.	.	2
Ձայնագրութիւն.	.	4
Նկարչութիւն.	.	2
Գեղագրութիւն.	.	3
		<hr/> 30

	ՅԳ. Դասարանի	
Կրօն.	.	2
Հայոց լեզու.	.	4
Ռուսաց լեզու.	.	4
Գաղղիերէն.	.	4
Ալգէբրայ եւ Թուրքաբանութիւն	.	4

	Շաբաթական դասք
Աշխարհագրութիւն Հայաստանի.	2
Ընդհանուր Աշխարհագրութիւն	3
Բնական Պատմութիւն	3
Ընդհանուր Պատմութիւն	2
Ձայնագրութիւն.	2
Գեղագրութիւն	2
	<hr/> 32

	ԻԴ. Դասարանի	
Կրօն.	.	3
Հայոց լեզու.	.	5
Ռուսաց լեզու.	.	5
Գաղղիերէն.	.	4
Ալգէբրայ.	.	2
Երկրաչափութիւն.	.	2
Հայոց Պատմութիւն	.	2
Ընդհանուր Պատմութիւն	.	2
Բնական Պատմութիւն	.	3
Ռուսաց Աշխարհագրութիւն	.	2
		<hr/> 30

	ԻԵ. Դասարանի	
Եկեղեցական պատմութիւն Հայոց	.	1
Հայոց լեզու.	.	3
Հայոց Մատենագրութիւն	.	3
Ռուսաց լեզու.	.	4
Գաղղիերէն.	.	3
Մատենատիկայ	.	3
Ֆիզիքայ.	.	3
Հայոց պատմութիւն.	.	2

Շաբաթական դաս

Ռուսաց պատմութիւն	1
Ընդհանուր Պատմութիւն	3
Ֆիզիքական Աշխարհագրութիւն	2
Ընդհանուր Աշխարհագրութիւն	2
	<hr/>
	30

Ի Զ. Դասարանի

Տօմար եւ կարգ Աստուածապաշտութեան	1
Հայոց լեզու	2
Հայոց Մատենագրութիւն	3
Ռուսաց լեզու	3
Գաղղիերէն	3
Մատենատիկայ	3
Ֆիզիքայ	3
Հայոց Պատմութիւն	3
Ընդհանուր Պատմութիւն	3
Ֆիզիքական Աշխարհագրութիւն	2
Տիեզերագրութիւն	2
Բնախօսութիւն եւ Առողջապահութիւն	2
	<hr/>
	30

Մանկ. խորհուրդս ի սկզբան անդ անցելոյ 1881—2 ուսումնական ամին ի քնին առ ուշագրութեամբ եւ զկազմակերպութիւն դասարանաց ձեւարանիս. եւ արգիւնքն երեւեցան, զի աշակերտք զետեղեալ են ի դասարանս այնպէս, զի չհամեմատին իրերաց ոչ ըստ հասակի եւ ոչ ըստ պատրաստութեան: Այս հանգամանք կազմակերպութեան դասարանացն ծանրացուցանէր զգործն, եւ արգել յառաջադիմութեան աշակերտացն առհասարակ լինէր: Առ ի դա-

ռաջս առնուլ չարեացս, անդամք Մանկ. խորհրդոյն փութացան ճշգիւ եւ գրեթէ խստիւ պահանջել յաշակերտացն զդասս, հոգացեալ ընդ նմին եւ զյորդորանացն՝ զի լրջմտութեամբ իմն գայցեն աշակերտք յընթերցասիրութիւն: Առ այս գործ դժուարաձեռն, որչափ ինչ առնելի էր ի միում ամի, փութացաք ի նոյն, սակայն եւ այնպէս անակնունելի էր կատարեալն յաջողութիւն:

Յանցելումն ամի ի լինէն մեր հանդիսատես Ե.րդ Տարեդարձին ձեւարանիս, եւ մեր լուաք ի մեծ զարմացումն թէ յամենայն աշակերտաց ձեւարանիս ինն աշակերտք միայն մնացին ի դասարանս իւրեանց յորս էին, իսկ հարիւր քսան աշակերտք փոխագրեցան ըստ կարգի ի բարձրագոյն դասարանս. զարմացաք արդարեւ ընդ նորանշան երեւոյթն, եթէ $\frac{1}{13}$ մասն միայն յետադէմ էին, իսկ $\frac{12}{13}$ մասն ըստ արժանւոյն յառաջացեալ: Մինչ դեռ այլուր գովաբանեն եւ ծափահարեն առ յառաջադիմութեան $\frac{3}{4}$ մասին աշակերտաց, եւ ոչ յաշակերտս ժողովեալս ընտրանաւ՝ լուեալ է երբէք նոյնօրինակ հսկայաքայլ յառաջադիմութիւն: Զի ոչ սնապաշտութեան է տեղիս, այլ գործոյ, պարտիմ՝ յանդիման կացուցանել զվիճակ ձեւարանիս այնպէս, որպէս եւ է. անկեղծութեամբ իսկ ասեմ, թէ ի պաշտօնավարութեան իմում՝ յանցելումն ճշմարտիւ հասու եղէ, թէ չէր ի ձեւարանիս յառաջադիմութիւնն այնպէս, որպէս խոտտանային մեզ թիւքն ի հաշուին:

Այո՛, հաւատամ, զի յառաջին ամս բացման ձեւարանիս մարթ էր մեծի յառաջադիմութեան ակն ունել, քանի հոգ եւ իննամ ունէր վարչութիւնն յընտրութիւն աշակերտացն, նուիրակս առաքեալ յայլ եւ այլ տեղիս, եւ որք՝ որպէս եւ ինձ. յայտնի է ի լրոյ, մեծաւ զգուշութեամբ կատարէին զպաշտամունս իւրեանց: Իսկ ընտրութիւնքն՝ որում ներ-

1004
55751

կայ եղէ յանցելումն ամի, ոչ գոհացուցիչ էին արգարեւ, զոր եւ ցաւելով յայտնեմ Վեհափառութեան Ձերում: Նաեւ յայսմ ամի ոչ էր իսկապէս ընդունելութիւն աշակերտաց, այլ որոշեալ էր արգէն միացուցանել զժառանգաւորաց Ռպրոցն. ուստի եւ անմարթ էր առնել ընտրութիւն ինչ. յայսմհետէ ոչ ի շնորհուկս ումեք, այլ միայն յօգուտ ձեմարանիս հայեցեալ պարտ է ըստ կարգի ընտրել եւ ընդունել զաշակերտսն. նաեւ գլխաւոր այն է, զի ջանասցուք հաստատութիւն ազգային յընդհանուրս կացուցանել զձեմարանս, եւ ոչ զմին ի նահանգաց կամ ի գաւառաց նախագասեալ այլոցն ամենեցուն, եւ միումն պատճառ բարօրութեան լինել եւ զայլովք զանց առնել: Այսօր իսկ թիւ աշակերտաց մերոց՝ որ ի Վաղարշապատայ եւ յերեւանայ եւ ի շրջակայից նոցա, յանհամեմատն առաւելուքան զայլոցն. իսկ ի բնակչացն Պարսկաստանի երկու աշակերտք միայն են: Են եւ այլ եւս գաւառք եւ ի նոյն իսկ նահանգէն Երեւանայ՝ ուստի ոչ է ի ձեմարանիս աշակերտս եւ ոչ մի:

Ըստ որոշման Մանկ. խորհրդոյն եղեն կիսամեայ գրաւոր քննութիւնք ի վերջն Իեկտեմբերի, յորս երեւեցաւ զի լեզուն Հայոց ոչ որպէս արժանն է՝ յառաջագէմ էր ընդհանրապէս ի ձեմարանիս, եւ աստիճան մտաւորական զարգացման աշակերտացն ընդհանրապէս ոչ բարձր էր: Առ այս ի նկատի առեալ Մանկ. խորհրդոյն զպահանջս գասատուի լեզուին Հայոց՝ յաւելուլ զժամանակ գրաւոր աշխատութեան աշակերտացն, որպէս եւ յայտնի եղեւ յարգեանց քննութեանն, որոշեաց յաճախակի կրկնել զգրաւոր պարագմունսն ըստ այլ եւ այլ առարկայից, եւ ի տարեկան բանաւոր քննութիւնսն լծորդել եւ զգրաւոր քննութիւն ի գլխաւոր առարկայից, որպէս զի մի վրիպեսցուք, որչափ

եւ հնարն իցէ՝ ի տեղափոխելն զաշակերտս: Նոյնպէս ցանկալի լինելով մեզ նպաստել մտաւորական զարգացման աշակերտաց՝ որոշեցաք տալ գրականական երեկոյս յամենայն երկու եօթնեակրս, յանձնեալ ուսանողաց կրկին լսարանացն՝ ի գիր առնուլ յօդուածս ինչ ի հայկական զպրութենէ եւ ընթեռնուլ ի լուր ընկերակցացն: Զայս որոշումն օգտակար՝ ոչ եղեւ մեզ յարգիւնս ածել յանցելումն ամի. քանզի ուսանողք ծանրաբեռնեալ էին դասուք իւրեանց եւ գործնական աշխատութեամբք: Իսկ յայսմ ամի փոյթ յանձին կալայց իրագործել զորոշումնս Մանկ. խորհրդոյն եւ ըստ այնմ տալ գրականական երեկոյս, ընդ որ լիայոյսեմք, եթէ օգուտ մեծ ընծայիցեմք մտաւորական զարգացման ուսանող ճառախօսացն եւ ունկնդիր աշակերտաց: Յանցելումն ամի զերիս եւ եթ գրականական ժողովս յաջողեցաք տալ, մի՛ ի տօնի Ս. Վարդանանց զօրավարաց, մի՛ ի տօնի Ս. Սահակայ եւ Մեսրոպայ եւ մի՛ ի տօնի Ս. Հօրն մերոյ Գրիգորի Առաւորչին ելին ի Վիրապէն, յորս ակն յայտնի երեւեցաւ, զի մարթ է շարունակել զայն յայսմ ամի ըստ ամենայն կանոնաւորութեան: Ի տօնական աւուրսն յայնոսիկ ճառախօսեցին նաեւ ոմանք յուսուցչաց ձեմարանիս՝ եւ շքեղ իմն փայլ յաւելին ի հանդէսն: Ի գէպ է ինձ եւ աստ խոստովան լինել, եթէ կարելոր է արգարեւ մասնակցութիւն ուսուցչաց ի գործս այսպիսիս:

Մանկ. խորհուրդն առ ի բարձրացուցանել զմտաւորական զարգացումն աշակերտաց, ուշագիր եղեւ եւ ի մատենագարանն, եւ ընտրեաց ի մատենապետ զՊ. Փիլիպպոս Վարդանեան, տալով նմա օգնական զմին յուսանողաց բլսարանի զՍարգիս Տ. Գաբրիէլեան, այլ ցաւ է ինձ ասել, զի զուրկ է մատենագարան մեր եւ ի կարելոր գրոց՝ մանաւանդ յընթերցանելեացն, ըստ որում եւ անբաւական ի

լրացուցանել զպիտոյս աշակերտաց, թողու՛ք ասել թէ՛ ոչ
 համեմատի ամենեւին ցանկութեան Մանկ. խորհրդոյն:
 Հարկ ի վերայ կայ եւ ամենայն ուսումնարանի տալ գումար
 ինչ որոշեալ ամ ըստ ամէ առ ի ձեռս բերել զգիրս օգ-
 տակարս ընթերցանութեան, բայց ձեմարանիս առ այս
 յաւելուն բազում արգելք եւ խոչընդոտք:

Առ ի նպաստել կրօնական եւ բարոյական դաստիարա-
 կութեան աշակերտաց ձեմարանիս ըստ որոշման Մանկ.
 խորհրդոյն մեկնեն աշակերտաց զՍ. Աւետարանն Գեր-
 Գրիգոր Սրբ. Աղափիրեան եւ Արժ. Կիւրեղ վարդապետ
 Սրապեանց կցորդեալ նմին եւ զբարոյական խրատս եւ
 դարձուցեալ զուշագրութիւն աշակերտացն յայլ եւ այլ
 թերութիւնս նոցա:

Այլ եւ զներքին կացութենէ ձեմարանիս, պարտ է ինձ
 յայտնել. զի ուսանողք լսարանաց կառավարեն զամենայն
 ինչ, սկսեալ ի խոհանոցէ մինչեւ ի թանգարան ֆիզիքա-
 կան գործեաց՝ ընդ պատասխանատուութեամբ վարչու-
 թեան ըստ առանձին հրահանգաց, որով թեթեւացուցին
 ըստ մասին զգործ վարչութեանս, եւ ինքեանք եւս ընդե-
 լացան ուսումնարանական կառավարութեան: Յաւելում
 եւ զայն՝ զի ի Յուլիս ամսոյ եւ այսր ուսանողք սկսան կա-
 տարել եւ զպաշտօն օգնական վերակացուի, եւ ակն ունելի
 է՝ եթէ ձեմարանս ընծայեսցէ առ յապայն ոչ միայն ման-
 կավարժ ուսուցիչս, այլ կառավարիչս ի պէտս ազգային
 ուսումնարանաց, որոց պակասութիւնն արդարեւ զգալի է
 այսօր ամենայն ուրեք: Ի նկատի ունէաք մանուաւնդ եւ
 զայն, զի կառավարութիւնն ո՛ր եւ է այսպիսի հաստատու-
 թեան՝ եթէ յանձն իցէ աշակերտաց, խաղաղ եւ կանոնա-
 ւոր եւս ընթանայցեն ներքին կեանք հաստատութեանն,
 որպէս եւ փորձն յանդիման կացոյց մեզ:

Եւ այս խորին համոզումն է մեր, եթէ ուղղութիւնս
 արդիւնաբեր եւս լինիցի յապագայի, եւ ձեմարանս մայրէ
 արդեօք ի շաւիղ ինչ այնպիսի, ընդ որ արտաքս ելանել ոչ
 եւս լինիցի նմա. յայսմ ապահով եմք մեր:

Եւ ժամանակ գործառնութեան՝ ձեմարանիս է այսպէս
 բաժանեալ ըստ որոշելոյ Մանկ. Խորհրդոյն:

- 5¹/₂ — 6³/₄ Աղօթք. թէյ եւ հանգիստ
- 6³/₄ — 7⁵/₄ Սերտողութիւն
- 7⁵/₄ — 8 Հանգիստ
- 8 — 8⁵⁵ Ա. դաս
- 8⁵⁵ — 9⁵ Հանգիստ
- 9⁵ — 10 Բ. դաս
- 10 — 10⁴⁵ Նախաճաշ եւ հանգիստ
- 10⁴⁵ — 11⁴⁰ Գ. դաս
- 11⁴⁰ — 11⁵⁵ Հանգիստ
- 11⁵⁵ — 12⁵⁰ Դ. դաս
- 12⁵⁰ — 1⁵ Հանգիստ
- 1⁵ — 2 Ե. դաս
- 2 — 5 Ճաշ եւ հանգիստ
- 5 — 7 Սերտողութիւն
- 7 — 7¹/₄ Հանգիստ
- 7¹/₄ — 7³/₄ Ընթրիք
- 7³/₄ — 8¹/₂ Հանգիստ
- 8¹/₂ — Աղօթք եւ ննջեսցեն:

Յետ աղօթիցն ց 9¹/₂ ժամ պարապեսցին աշակերտք Ե.
 եւ Զ. դասարանաց եւ Ա. եւ Բ. լսարանաց որոց պէտք իցեն:
 Միայն ի շաբաթ երեկոյս եւ ի նախատօնակս տօնիցն,
 յորս աշակերտք վաղայարոյց գնան յեկեղեցի, չլինի սեր-
 տողութիւն, եւ հանգիստն երեկոյեան կանխէ ժամու միով
 յառաջ քան զայս սահման:

Նոյնպէս եւ ի կիւրակէս եւ ի տօնի աւուրս նախաճաշիկն լինի զոյգ ընդ թէյին յետ արձակման եկեղեցւոյն, եւ ճաշն կանխէ երկու ժամուք յառաջ, եւ յերեկոյին սերտողութիւնն աւարտի ի միում ժամու:

Յոցակի Գասոց ի շաբաթ ասորս

8—8⁴⁰ Ա. դաս

8⁴⁰—8⁵⁰ Հանգիստ

8⁵⁰—9⁵⁰ Բ. դաս

9⁵⁰—10⁴⁵ Նախաճաշ եւ Հանգիստ

10⁴⁵—10⁵⁵ Գ. դաս

10⁵⁵—11¹⁰ Հանգիստ

11¹⁰—11⁵⁰ Դ. դաս

11⁵⁰—12⁵ Հանգիստ

12⁵—12⁴⁵ Ե. դաս

12⁴⁵—1— Հանգիստ

1—2— Մեկնութիւն Աւետարանի

Զայս առանձին ցուցակ որոշեաց Մանկ. Խորհուրդն առ այն՝ զի ժամ լիցի եւ մեկնութեան սուրբ Աւետարանին եւ բարոյական խրատուցն յետ աւարտելոյ օրական դասուցն որպէս տեսանի ի ցուցակին:

Իսկ զաղօթս աշակերտաց այսպէս կարգաւորեաց Մանկ. Խորհուրդն:

Աղօթք ասորս

Ա. Հայր մեր որ յերկինս.

Բ. Տէր եթէ զըթունս իմ բանաս.

Գ. (յաւուրս աձ. բձ. գձ. դձ.) Լոյս արարիչ լուսոյ, (յաւուրս աղ. բղ. գղ. զղ.) Անեղանելիդ Աստուած

Դ. Զառաւօտու զաղօթս եւ զբանաւոր պաշտօնս.

Ե. Գլուխ մի բանից Ս. Աւետարանի (ըստ ունեւոյ օրինակին թարգմանութեանն Հայոց:)

Զ. Օրհնեսցուք զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհն:

Աղօթք ի սկսանելն զԳասոց յառաջին ժամու.

Հայր մեր . . . յԱ. եւ Բ. դասարանս

Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա . . . յ Գ. ի Զ. դասարանս եւ յԱ. եւ Բ. յարանս.

Աղօթք յառաջ Գասոց զնախաճաշիկն, զճաշն եւ զընկրկն.

Հայր մեր որ յերկինս.

Աղօթք յետ նախաճաշիկն, ճաշու եւ ընկրկաց.

Զլիութիւն սեղանոյս.

Աղօթք ի վերջ Գասոց յառաջ հինգերորդ Գասոցն.

Հայր մեր որ յերկինս.

Աղօթք երեկոյեան.

Ա. Հայր մեր որ յերկինս. . .

Բ. Զհանգստեան զաղօթս. . .

Գ. Փառք քեզ տէր Աստուած. . .

Դ. Հրեշտակ զուարթուն. . .

Ե. Ողորմութիւն քո, Տէր, զհետ մեր եկեսցէ. . .

Յամին 1880—1 130 աշակերտք ներկայ գտան ի քննութեան. մին ի սոցանէ արձակեալ էր ըստ որոշման նախորդ Մանկ. Ժողովոյն, իսկ 124 աշակերտք ի Սեպտեմբերի Հաւաքեցան ի ձեմարանս: Յընթացս ամին անցելոյ ընկալեալ եղեն այլ եւս 55 աշակերտք, ուստի եւ թիւ աշակերտաց միահամուռն եղեւ 179 յանցեալ 1881—2 ուս. ամին, որք եւ զետեղեցան յերկուսին յարանս եւ ի վեց դասարանս ըստ այսմ.

Ե. Մարտի 7 ռուսացի սկզբի 14
 Զ. Գառարանի 19 աշակերտք 22
 Է. Գ. 23
 Ը. Գ. 24
 Թ. Գ. 37
 Կ. Գ. 33

Ընդամենայն ռուսացիք 21 եւ աւելերաք 158: Համագումար 179:

Յուլյակ աշակերտացի թէ ուսումը իցեն:

I. ՌՈՒՍԱՍԱՆ 144
 Ա. ԲԵՍԱՐԱՆՈՅ ՎԻՃԱԿ 13

Քիչնեւ 2
 Ն. Նախընթաց 4
 Նիսիլիթա գիւղ 1
 Թօփթի գիւղ 1
 Օրբազար 2
 Խարասուբազար 3

13

Բ. ԱՍՏՐԱՆԱՆԱՅ ՎԻՃԱԿ 15

Աստրախան 1
 Մոզզով 1
 Ղալաբ 1
 Ղարաջալի գիւղ 1
 Արմաւիր 1

5

Գ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵՏԻ ՎԻՃԱԿ 26

1. Տփլիս 2
 Մանգլիս գիւղ 1
 Ջալալօղլի 2
 Վարդաբուրք 1
 Օձուն 1
 Գիլիջան 2
 Պօղոսքիլիսայ 1
 Ղոշխոթան 1
 Խելաւ 2
 Աղնախ 1
 Զաքաթալայ 1
 Քուլթայիս 2

17

2. Ախալցխայի փոխանորդութիւն

Ախալցխայ 4
 Մուկրութ գիւղ 1
 Սուլգայ 1

6

3. Գորսայ փոխանորդութիւն

Գորի 1
 Յիւինլալ գիւղ 1

2

4. Գանձակայ փոխանորդութիւն

Գանձակ 1

1

Գ. ԱՐՑԱԽՈՒ ՎԻՃԱԿ 16

1. Շուշի	4
Հատրուզ գիւղ	1
Խլաթաղ	1
Նորշէն	1
Փիրաջամալ	1
	<hr/>
	8

2. Նոխասայ գոթանորդու-նի-ն

Նուխի	3
Նիժ գիւղ	2
Վարդաշէն	2
Դաշքուկաղ	1
	<hr/>
	8

Ե. ՇԱՄԱԽՈՒ ՎԻՃԱԿ 3

Սաղիան գիւղ	1
Խաչմաղ	1
Գիրք	1
	<hr/>
	3

Զ. ԵՐԵՒԱՆԱՅ ՎԻՃԱԿ 81

1. Երևանայ գոթանորդու-նի-ն

Երեւան	17
Զիգամիլու գիւղ	1
Դաւալու	1
Օվայ	1
Ապարան	2
Փարաքար	1
	<hr/>
	23

2. Ալէքսանդրապոլ գոթանորդու-նի-ն

Ալէքսանդրապոլ	5
Մեծ Ղարաքիլիս գիւղ	3
	<hr/>
	8

3. Զ. Նախիջևանի գոթանորդու-նի-ն

Աստապատ գիւղ	1
Ագուլիս	3
Փորագաշա	1
	<hr/>
	5

4. Տախևու գոթանորդու-նի-ն

Տաթեւ գիւղ	3
Մեղրի	2
Լօրի	1
Դարապատ	1
Քաջարանց	1
Բռնակոթ	1
Արջաձոր	1
Խնձորէս	1
	<hr/>
	11

5. Ս. Էջմիածնի գոթանորդու-նի-ն

Վաղարշապատ գիւղ	15
Աշտարակ	3
Օշական	1
Ֆրանգանոց	1
Ալիբէգլու	1
Զէյվայ	1
	<hr/>
	22

6. Նոր Բայազէտ - Գործակալութիւն

Նոր բայազէտ	2
	<hr/>
	2

7. Սուրմարտի Գործակալութիւն

Իգդիր գիւղ	3
Իգդիրմաւի	1
Քրուբ	1
Հ. Եվջիւար	1
	<hr/>
	6

8. Արմաւիրի Գործակալութիւն

Ղուզիկիւտան	1
	<hr/>
	1

9. Թալինի Գործակալութիւն

Թալին	1
Տաշխալայ	1
Ադիաման	1
	<hr/>
	3

II. ՏԱՃԿԱՍՏԱՆ 32

Ա. ՏԱՃԿԱ ՀԱՅԱՍՏԱՆ 13

Հին Բայազէտ	1
Իւջքիլիսէի վանք	1
Արաբկեր	2
Երզնկայ	1
Վան	4
Տիգրանակերտ	3
Մուշ	1
	<hr/>
	13

Բ. ԱՆԱՏՈՒԻՍ 10

Պիլեճիկ	1
Իւնիա	1
Պրուսա	3
Տրապիզոն	1
Շ. Փարաշիսար	1
Սեբաստիա	1
Կուտինա	1
Նիկոմիդիա	1
	<hr/>
	10

Գ. ԿԻԼԻԿԻԱ 2

Այնթափ	2
	<hr/>
	2

Դ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ 7

Կ. Պօլիս	5
Ադրիանուպօլիս	1
Ռօզոստոյ	1
	<hr/>
	7

III. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ 2

Դաւրէժ	1
Ասպազան	1
	<hr/>
	2

IV. ՌՈՒՄԱՆԻԱ 1

Ֆոքշան	1
	<hr/>
	1

Մանկավարժական խորհուրդս ի վախճան ուս. ամին անցելոյ այսպէս որոշեաց կատարել զքննութիւն աշակերտացն: Զրկել ի քննութենէ զայնոսիկ աշակերտս՝ որք յընթացս դասուցն ոչինչ յառաջագիմութիւն ցուցին, եւ քննել զյառաջագէմնն միայն յառարկայն՝ զորս ակարտեցին: Իսկ ի մատեմատիքական առարկայս եւ ի լեզուս քննեսցին ի գրութեան միայն: Ըստ այսմ:

Ա. Գրասարան

Ս. Պատմութիւն	բանաւոր
Հայոց լեզու	գրաւոր
Ռուսաց լեզու	»
Թուաբանութիւն	»

Բ. Գրասարան

Ս. Պատմութիւն	բանաւոր
Հայոց լեզու	գրաւոր
Ռուսաց լեզու	»
Թուաբանութիւն	»

Գ. Գրասարան

Ս. Պատմութիւն	բանաւոր
Հայոց լեզու	գրաւոր
Ռուսաց լեզու	»
Ֆրանսերէն	»
Թուաբանութիւն	» եւ բանաւոր
Ալգեբրա	»
Հայաստ. Աշխարհագր. բանաւոր	
Աշխարհագրութիւն	»
Ռուսաբանութիւն	»
Զայնագրութիւն	»

Դ. Գրասարան

Կրօն	բանաւոր
Հայոց լեզու	գրաւոր
Ռուսաց լեզու	»
Ֆրանսերէն	»
Ալգեբրա	»
Երկրաչափութիւն	»
Ռուսաստ. Աշխարհ. բանաւոր	
Բնական Պատմութիւն	»

Ե. Գրասարան

Հայոց լեզու եւ Մատեն. գրաւոր	
Ռուսաց լեզու	»
Ֆրանսերէն	»
Ալգեբրա	»
Երկրաչափութիւն	»
Ֆիզիքա	»
Ռուսաց Պատմ. բանաւոր	
Եւրոպ. Աշխարհագր.	»
Ֆիզիք. Աշխարհագր.	»

Զ. Գրասարան

Հարցաքննութիւն յամենայն առարկայից եթէ բանաւոր եւ եթէ գրաւոր

Ա. Ըստարան

Աստուածաբանութիւն	բանաւոր
Քննակ. Քերականութ.	գրաւոր եւ բանաւոր
Ռուսաց գրականութ.	»
Գերմաներէն	»
Ֆրանսերէն	»
Ընդհ. գրականութիւն	»
Հոգեբանութիւն	բանաւոր
Տրամաբանութիւն	»

Բ. լսարան:

Ընդհ. եկեղ. Պատմ. բանաւոր
 Ռուսաց գրականութ. գրաւոր
 Ընդհ. , , ,
 Գերմաներէն , , ,
 Հոգեբանութիւն բանաւոր
 Բարոյակ. Փիլիսոփ. , , ,
 Մանկավարժութիւն , , ,

Յայտնէք քերականութեան աշակերտաց.

	Փ	Ս	Մ	Մ	Ս	Մ
	Փ	Ս	Մ	Մ	Ս	Մ
յ Բ. լսարանէ	7	»	»	»	»	»
յ Ա. »	12	»	2	»	»	»
ի Զ. դասարանէ	14	4	»	1	»	»
ի Ե. »	10	»	9	1	»	2
ի Դ. «	12	»	7	»	1	3
յ Գ. «	13	»	7	»	3	1
յ Բ. »	19	»	12	»	»	6
յ Ա. »	23	»	8	»	»	2
	110	4	45	2	4	14

Զորեցուն աշակերտաց Զ. դասարանի հարկ եղել տալ
 վկայական) եթէ օրհնութեամբ Վեհափառ Հօրդ աւար-
 տեցին նոքա զգլխանոցական շրջանն որք են. Ստեփաննոս
 Թորոսեան Աստվածանցի, Գրիգոր Ղարիբեան Բագրեւան-
 դացի, Համբարձում Սաֆարեան Աստրախանցի եւ Յով-
 հաննէս Տ. Գրիգորեան Մեղրեցի: Ոչ աւելորդ է արդեօք յի-

շել աստանօր: զի մին ի չորիցս՝ Համբարձում Սաֆարեան,
 վերագարձեալ ի հայրենիս իւր եւ ի 24 Օգոստոսի մաշեալ
 ի թոքախտութենէ՝ յոր տառապէր յերկուց ամաց հետէ,
 կնքեաց զկեանս իւր:

Սրգ՝ ըստ հաշուիս երեւի զի աշակերտք 62 առ հարիւր
 փոխադրեցան, 25 առ հարիւր մնացին ի դասարանս, ուր
 էին՝ եւ գրեթէ 8 առ հարիւր արձակեցան. անշուշտ եմք
 զի կանոնաւորեցի այս թիւ առ յայնչն, քանզի ներդաշ-
 նակ եւս կազմակերպեցան այժմ՝ դասարանքն:

Յանցեալ 1881—2 ուս. ամին դասատուք ձեմարանիս
 էին.

Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեան. Կրօն եւ ընդհ.
 եկեղ. պատմ. շաբաթական 14 դաս:

Գեր. Արիստակէս Եպիսկոպոս Մեղրակեան. Կրօն եւ
 Հայոց լեզու. շաբաթական 15 դաս:

Արժ. Կիրեղ վարդապետ Սրապեան. Կարգ Աստուած-
 պաշտ. Տօմար եւ Հայոց լեզու. շաբաթական 15 դաս:

Արժ. Ղեւոնդ վարդապետ Յովակիմեան. Զայնագրու-
 թիւն. շաբաթական 12 դաս. յորոց 2 խմբին երգչաց:

Պ. Ս. Մանգինեան. Տրամաբանութիւն, Մանկավարժու-
 թիւն, Բարոյակ. Փիլիսոփայութիւն, Հոգեբանութիւն եւ
 գործնական պարապմանց ղեկավարութիւն. շաբաթական
 24 դաս:

Պ. Փիլիպպոս Վարդանեան. Գերմաներէն. Ընդհ. Պատմ.
 Ընդհ. եւ Ռուս, Գրակ. եւ Ընդհ. Աշխարհագրութիւն. շա-
 բաթական 24 դաս:

Պ. Ստեփաննոս Պալասանեան. Հայ. Պատմ. եւ Տրանսե-
 րէն. շաբաթական 20 դաս:

Պ. Կարապետ Կոստանեան. Հայ. Պատմ. Հայ. Մատեն.
 Քննական Քերակ. Հայաստ. Աշխարհագրութիւն եւ Եկեղե-

ցական Պատմութիւն. շաբաթական 16 դաս:

Պ. Մարտիրոս Սիմեօնեան. Մատեմ: Տիեզերագրութիւն. շաբաթական 20 դաս:

Պ. Բժիշկ Գրիգոր Տէր Գրիգորեան. Բնագիտ. Բնակ: Պատմ: Բնախօսութիւն եւ Առողջապահութիւն. շաբաթական 16 դաս:

Պ. Մանրէն Մանրինեան. Ռուսաց լեզու եւ Ռուսաց պատմ: շաբաթական 21 դաս:

Պ. Բարսեղ Բաստամեան. Բնագ. եւ Ռուսաց աշխարհագրութիւն, Ռուսաց լեզու. շաբաթական 14 դաս:

Պ. Մարտիրոս Քէրէսթէճեան. Գեղագրութիւն. շաբաթական 8 դաս:

Պ. Առաքել Սագինեան. Գծագրութիւն եւ Նկարչութիւն: շաբաթական 6 դաս. յորոց 2 յետ ճաշու՝ ցանկացողոց:

Պ. Ռուբէն Ռուբինեան. Տաճկերէն. շաբաթական 5 դաս:

Պ. Ասկան Յովհաննիսեան. Պարսկերէն. շաբաթական 2 դաս:

Ի սկիզբն ամէն յիմ վերայ ծանրացան երեքտասան դասք Յիզիք. Աշխարհ. Թուաբան. Բնական Պատմութեան եւ Տարրալուծութեան: Անուցիչք ընդհանրապէս ըստ կանոնի յաճախեցին ի դասախօսութիւնս իւրեանց, եւ հիւանդութիւն միայն երբեմն առթեաց նոցա յետս մնալ ի պարտեաց: Ի պատճառս երկարատեւ հիւանդութեանն Պ. Մ. Սիմեօնեան չկարաց ի Յունիարէ եւ այսր շարունակել զգասախօսութիւն իւր. սակայն ըստ ընկերական պարտեաց յանձն առին ոմանք ի դասատուաց ունել զտեղի նորա, որպէս Պ. Բժիշկ Տ. Գրիգորեան եւ Պ. Աղէքսանգր Սիմեօնեան. նոյնպէս եւես յանձն առի զմետասան դաս. եւ այսպէս յերկրորդում մասնն ուս. ամին ծանրանային յիմ վերայ 24 դասք ըստ եօթնեկաց:

ձեմարանս ունի զիւր առանձին հիւանդանոց եւ զբժիշկ զՊ. Տ. Գրիգորեան. անհրաժեշտ էր ունել եւ առանձին տեղի պահել դեղորայս, այլ յանցելումն ամի հարկեցաք բերել զդեղորայսն յերեւանայ, որ բազում անպատեհութեանց եղեւ առիթ. իսկ յայսմ ամի ապսպարեցան դեղորայք առ ի բառնալ զանպատեհութիւնսն:

Ի վերջ տեղեկագրոյս պարտ է ինձ, Վեհ. Տէր, յարել եւ զայս, զի եւ մեք ամենեքին ոգեւորեալ եմք ի մի եւ նոյն նպատակ, յայտ է, արգիւնաւոր կացուցանել զՀաստատութիւնս, որում Վեհափառութիւն Ձեր, Հիմնադիրդ սորին յոչ ինչ խնայեցէք մինչեւ ցայսօր առ ի Հաստուցանել զայն յայս վիճակ՝ յորում գտանի: Տացէ՛ Աստուած, զի եւ յայս ամ եւ յայլ եւս բազում ամս ի խաղաղ եւ ի կանոնաւոր ընթացս յառաջ ընթանայցէ Հաստատութիւնս, տալ Ազգիս Հայոց եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ անդամս դաստիարակեալս ի բարոյական կրթութեան եւ ի հոգի ազգայնութեան, ի պարծանս լրութեան ազգիս եւ ի յաւէրժական յիշատակ պանծալի Անուան Վեհափառ Հիմնադիրդ ձեմարանիս:

ՁԵՐՈՅԻՆ ՎԵՀԱՓՈՒՈՒԹԵԱՆ
ԱՄԵՆԱՅՈՒՆԱՐԷ ԵՍՈՒԱՅ ԵՒ ՈՐԴԻ
ՏԷՌՈՒՆ ԳԷՆՐԳԷԱՆ ԶԷՄԱՐԱՆԻ
ԱՐՇԱԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ:



յնկեցր եւ բոմբւածաւ զմիջմաստս զից մնն սմազանի
 միջնաստս եւ յմն զի աշխարհմա . Յանգոսից՝ 8 . Քր
 ցարմիցա՝ միս սեպտեմալ յա տարացոց յմն քրմ
 -ասմասրմա Ատրազ զո լամարեցի մտաղոցքք յնկ
 -ծք մարմնացսոսս միս Նոյալ լոյ . Միտա Երեւ քմով
 : մանկիկա՝ մասարմար յամազ ի սա ցարգոց
 Եւ յնկալ . զձՁ . շնի լ աղար սլոգրայմիմա զիցի 4
 մլոմ Եւ ի ի զի յնկ յարգուեք միջնմնա ցմ Եւ ի քր
 -տասասս՝ ի մնացոցս զտամեքքոս : Ե ալալ լետարս
 միցոս քոյրսմնի՝ զից միջնաստիա՝ մի Ատրոս Եւ մնկ
 մար յմնարտոս՝ ի սա զտար Եւ մնի ցլքմիմնի զմի լոյ
 սլալ Եւ ի քր . Յարտա՝ ի քր : մնասր Ատրոզ լամի սլալ
 զտամնմնի ի Եւ քարսմ ի մնա Ատրոզ սմ յալ Եւ մ
 -քմ յաա Եւ մնկիկա՝ տասասս՝ ի քրմնիկն զաւալ սլալից
 -ասք սնարմա յարմիկն ի քրմնաստալա՝ Եւ զոլա՝ սլալ
 -քա ի քր՝ ի Եւ մնկիկն ի մնարտոց քմիարմիկն
 -աեղիւլ ի Եւ միքքոս մնկիկոց սմաճար ի մնկիկոց
 քիցքոսմնի՝ Եւ միա՝ մնարտմ ի քրմնար լետարի մոյ
 : սմարտմնի

ՅԱՆԳՈՍԻՑ ԵՎ ԵՄՄԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՄՄԱՆՈՒԹՅԱՆ



« Ազգային գրադարան



NL0237383

53.951

